

Որակի հոշակագիր ճոպանուղի

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Ճոպանուղի
0.2	Ոլորտը	Տրանսպորտ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժին Բաժնի պետ Անահիտ Ներսիսյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 582949 Էլ. փոստ՝ anahit_nersisyan@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	<p>Օգտագործողներին տրամադրել արդիական տեղեկատվություն ճոպանուղու գործունեության տրանսպորտի (ուղևորների փոխադրումների հետ կապված ծախսերը, ուղևորատար շարժակազմի քանակը տարվա վերջին, ճոպանուղու շարժակազմի վազքը, ճոպանուղիների (գծերի) երկարությունը միակողմանի հաշվարկով տարվա վերջին, ուղևորատար ճանապարհների (գծերի) շահագործական երկարությունն երկկողմանի (երկգծային) հաշվարկով տարվա վերջին և ուղևորների փոխադրումների հետ կապված էլեկտրաէներգիայի ծախսը) վերաբերյալ:</p> <p>Ցուցանիշների հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 70-ական թվականներից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է՝ միջազգային դասակարգումներին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին համադրելիությունն ապահովելու նկատառումներով:</p>
0.5	Օգտագործողները և կիրառումը	<p>Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:</p> <p>Ճոպանուղու գործունեության ցուցանիշները կիրառվում են տրանսպորտի բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:</p>
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշների կազմման հիմնական աղբյուրը վիճակագրական հաշվետվություններով իրավաբանական անձանցից ամսական և տարեկան պարբերականությամբ հավաքվող տվյալներն են:

0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	Ճուպանուղին ցամաքային մարդատար տրանսպորտի տեսակ է, որն իրականացվում է վերգետնյա (օդային) էլեկտրական գծերով:
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p><i>Հիմնական հասկացություններ</i></p> <p>Փոխադրվել են ուղևորներ ցուցանիշն որոշվում է վաճառված երթևեկության բոլոր տեսակի փաստաթղթերի (մեկանգամյա տոմսերի, երկարաժամկետ արձեմենտային տոմսերի և այլն) քանակով (ներառյալ անվճար երթևեկության իրավունքից օգտվողները):</p> <p>Ուղևորաշրջանառությունն որոշվում է տեղափոխված ուղևորների քանակի և 1 ուղևորի տեղափոխման միջին հեռավորության արտադրյալների հանրագումարով: 1 ուղևորի տեղափոխման միջին հեռավորությունն որոշվում է ուղևորների հոսքի մեկանգամյա դիտարկումների հիման վրա և համարվում է հաստատուն մեծություն մինչև հաջորդ դիտարկումը:</p> <p>Ուղևորների և ուղեբեռների փոխադրումների հետ կապված ծախսեր ցուցանիշում արտացոլվում են հաշվետու ժամանակաշրջանում ուղևորափոխադրումների հետ կապված բոլոր ծախսերը (կյութական ծախսեր, աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ, սոցիալական ապահովության վճարներ, ամորտիզացիոն մասհանումներ):</p> <p>Ուղևորատար շարժակազմի քանակ ցուցանիշը ներառում է տվյալ կազմակերպության հաշվեկշռում առկա ճուպանուղու բոլոր վագոնների այն քանակը, որը գտնվում է աշխատանքում, պահեստում, պարապուրդում՝ տեխնիկապես սարքին վիճակում, վերանորոգման մեջ, վերանորոգմանը սպասելու վիճակում, ինչպես նաև աշխատանքին ոչ պիտանի, սակայն հաշվեկշռից դեռ դուրս չգրված:</p>

		<p>Հատուկ նշանակության շարժակազմը՝ հատուկ նպատակների համար օգտագործվող վագոնների քանակն է (վերանորոգման, ուսումնական վագոններ):</p> <p>Ուղևորատար շարժակազմի վազքը՝ բոլոր վագոնների ուղևորներով, դատարկ և գրոյական վազքերի հանրագումարն է (վագոն-կմ):</p> <p>Ճանապարհների (գծերի) բացված երկարությունը միակողմանի հաշվարկով ցուցանիչը ներառում է կազմակերպությունների հաշվեկշռում առկա վերանորոգման դեպոների (վագոնների նորոգման կայան), հանգույցների, շրջադարձային օղակների, ուղեբաժանքի գծերի երկարությունները: Ճանապարհների (գծերի) բացված երկարությունն որոշվում է միակողմանի (միագիծ) հաշվարկով: Ճոպանուղու ճանապարհների (գծերի) երկարությունը միակողմանի հաշվարկով որոշելիս անհրաժեշտ է միակողմանի տեղամասերի երկարությանը գումարել երկկողմանի (երկգիծ) տեղամասերի երկարությունների կրկնապատիկը: Այդ դեպքում Ճոպանուղու միակողմանի ճանապարհների ուղեբաժանքի գիծը հաշվարկվում է որպես երկկողմանի տեղամաս:</p> <p>Շարժման համար փակ (քանդման ենթակա) գծերը չեն հաշվառվում:</p> <p>Ուղևորատար ճանապարհների (գծերի) շահագործական երկարությունն երկկողմանի (երկգծային) հաշվարկով ցուցանիչը ներառում է ճոպանուղու ճանապարհների (գծերի) ընդհանուր տեղամասային երկարությունը՝ ներառյալ ուղեբաժանքի գծերը, շրջադարձային օղակները և որոշվում է երկկողմանի (երկգիծ) հաշվարկով: Եթե շարժումը սկզբնակետից վերջնակետ և հակադարձ ուղղությամբ կատարվում է տարբեր փողոցներով, ապա երկու ճանապարհների (գծերի) երկարությունը պետք է գումարել և բաժանել երկուսի:</p> <p>Տնտեսության տնօրինության տակ շարժակազմի գտնվելու օրերը՝ տրանսպորտային կազմակերպության տնօրինության տակ գտնվող վագոնների առկայությունն է՝ վագոն-օրերը, որը որոշվում է հաշվետու տարվա ընթացքում բոլոր օրացուցային օրերի թվի հանրագումարով, ներառյալ տոնական և հանգստյան օրերը՝ յուրաքանչյուր վագոնի համար:</p> <p><i>Ճյուղային ընդգրկունություն</i></p> <p>Ճոպանուղու գործունեության վիճակագրական դիտարկումները ներառում են Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի</p>
--	--	---

		<p>դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ. 2)՝ փոխադրումներ և պահեստային տնտեսություն բաժինը (H):</p> <p><i>Աշխարհագրական ընդգրկունություն</i></p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության մարզերը:</p>
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Ամսական, տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Ամսական տվյալները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 35/36-րդ օրը, իսկ տարեկան ցուցանիշները՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա 4-րդ եռամսյակում:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Ամսական, տարեկան
3 .Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում: Հետազոտությունը հիմնված է իրավաբանական անձանց համատարած դիտարկումների վրա:
3.2	Անճշտության աղբյուրները	<p>Տվյալների հավաքումն իրականացվում է համատարած հաշվառման սկզբունքով, որի համար հիմք է հանդիսանում վիճակագրական բիզնես ռեգիստրը:</p> <p>Սահմանված ժամկետում վիճակագրական տվյալների չներկայացման դեպքում կրկնվում են նախորդ ժամանակաշրջանի տվյալները:</p>
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ներկայացված տվյալների ճշգրտությունն իրականացվում է նախորդ տարի տվյալ ժամանակահատվածի համար ներկայացված համապատասխան տվյալների հետ համադրման միջոցով:
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 1998թ.-ը ցուցանիշը ներկայացվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 1998- 2001թթ. կիրառվել է Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգչի (ՄՍՃԴ) 3-րդ խմբագրությունը (ՄԱԿ): Սկսած 2002թ.-ից ցուցանիշը ներկայացվում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին համապատասխան (մշակված Եվրոպական համայնքների

		վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE, հիման վրա): 2010թ.-ից կիրառվում է ՏԳՏՀԴ խմբ.2-ը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Այլ աղբյուրներից ստացվող վիճակագրության հետ համադրելիություն առկա չէ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Հրապարակված տվյալները համարվում են վերջնական: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են համապատասխան ճշգրտումներով և բացատրական ծանոթագրություններով:
5 .Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	<p>Ամսական հրապարակումներ</p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույց (հայերեն): «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող տվյալները հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ» (հայերեն, ռուսերեն, անգլերեն)</p> <p>Տարեկան հրապարակումներ</p> <p>«Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն): «Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն):</p> <p>Տվյալների բազաներ</p> <p>http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</p> <p>Ինտերնետային հասցե</p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. http://www.armstat.am/am/?nid=82:</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:
5.3	Այլ տեղեկատվություն	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373:
5.4	Այլ տեղեկատվություն	Ճոպանուղու տրանսպորտի գործունեության հիմնական ցուցանիշների հաշվարկման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը զետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2018թ. նոյեմբերի 12-ի թիվ 68-Ն որոշման

		«Մետրոպոլիտենի, ճոպանուղու և տրոլեյբուսային տրանսպորտի աշխատանքի մասին» Ձև 65-ԷԷԿտրո (տարեկան) վիճակագրական հաշվետվությունների ձևերը և լրացման հրահանգները հաստատելու մասին» հաստատված հավելված 2-ում:
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: